ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. հունիսի 29-ից մինչև հուլիսի 2-ը Ղազախստանի Հանրապետություն (Նուր Սուլթան) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝ Գագիկ Մկրտչյան,**
   Արմեն Եգանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝ Նախարարի խորհրդական,**
   Արդյունաբերության զարգացման վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղազախստանի Հանրապետություն (Նուր Սուլթան), 2021թ. հունիսի 29-ից մինչև հուլիսի 2-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն «Astana Finance Days» ֆինանսական ֆորումի շրջանակներում կայանալիք «J-1 Ղազախստան» ոսկերչության ոլորտի անդրանիկ համագումարին:

6. Քննարկված թեմաները՝

Եվրասիական տնտեսական միության տարածքում ոսկերչության ոլորտի խնդիրները, ոսկերչական շուկայի զարգացման հեռանկարները, ինչպես նաև ընդհանուր ոսկերչական շուկայի գործունեության և արտահանման բյուրոյի ստեղծման և գործունեության հետ կապված հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համագումարի շրջանակներում հանդիպումներ տեղի ունեցան Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ոսկերչության ոլորտը համակարգող ներկայացուցիչների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնյաների և ոլորտի հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ: Քննարկվեցին հայկական ոսկերչական արտադրանքի Եվրասիական շուկայում առաջմղման խնդիրները: Համագումարում նախատեսված էր Գ.Մկրտչյանի ելույթը, որում բարձրացվեցին ոսկերչության և

ադամանդագործության ոլորտներում Եվրասիական տարածքում արդյունահանվող ոսկու և ալմաստի հումքի հասանելիության և մատչելիության խնդիրները, ստեղծվող արտահանման բյուրոյի առաքելությունն այս խնդրի լուծման գործում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պայմանավորվածություն ձեռք բերվեց գույքագրել բարձրացված խնդիրները, ձևավորել առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

08.07.2021թ.